

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԹԵՀՐԱՆԻ ԵՎ ԻՍՊԱՀԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Դեռևս մի քանի տարի առաջ Թեհրանի պետական համալսարանի գրական ֆաբուլիստի ուսուցչապետների խորհուրդը (Շորայե Դանեշբյադե) գրական որոշում էր կայացրել արդի և դասական հայերենի (գրաբար) դասավանդության կապակցությամբ, սակայն մինչև անցյալ ուսումնական տարին հնարավոր չէր եղել այն իրագործելու: 1967—1968 ուսումնական տարվա սկզբին, շնորհիվ գրական ֆաբուլիստի այդ ժամանակվա տնօրեն դոքտ. Զաբիլլահ Սաֆայի բարյացակամ վերաբերմունքի, ինչպես նաև համեմատական լեզվաբանության և դասական լեզուների ամբիոնի վարիչ դոքտ. Մ. Մոդադդամի համաձայնության՝ հիմք դրվեց հին և արդի հայերենի դասավանդմանը Իրանի մայրաքաղաքի այս բարձրագույն հաստատության մեջ: Դասավանդությունն ստանձնեց տղերիս գրողը, որ նույն ֆաբուլիստի երկարամյա ուսուցչապետը և գերմաներեն լեզվի ու գրականության ամբիոնի վարիչն էր:

Հակառակ տիրող կարծիքի, հայերենի ուսուցումը, դեռևս առաջին տարվա մեջ, սպասածից շատ ավելի հաջողություն գտավ գրական ֆաբուլիստի ընդհանուր լեզվաբանության և իրանագիտության հետևող պարսկախոս ուսանողների ու եվրոպական արդի լեզուներին, գրականությանը և կամ այլ գիտությանց հետևող հայ ուսանողների մոտ: 1967—1968 ուսումնական տարվա առաջին կիսամյակին շուրջ 20—25 հոգի ուսանողներ արձանագրվեցին և կանոնավոր կերպով հետևեցին հայերենի դասընթացին: Հայ ուսանողները ծանոթ էին հայերենին ու ոմանք այն բավական տիրապետում էին: Դրանով հանդերձ, նրանք ոչ միայն կանոնավոր կերպով հետևում էին դասերին, այլ նաև դասերից դուրս սիրով օգնում էին իրենց պարսկախոս դասընկերներին, տրված դասերն ավելի յուրացնելու համար: Ուսանողության գերակշռող մասը պարսիկներ էին:

Զմեռային կիսամյակին հայերենի դասավանդության համար, դասական մյուս լեզուների չափով, նկատի էր առնված միայն 3 միավոր: Համաձայն ներքին կանոնադրության, միավորի (վահեդ) դասավանդության չափը չի սահմանափակված և յուրաքանչյուր միավորի դիմաց

կարելի է պարապել երկու և կամ ավելի ժամեր: Զմեռային կիսամյակին նկատի էր առնված միայն տառաձանաթությունը և արդի հայերենի դյուրին բնագրերի ընթերցումը: Նույն տարվա երկրորդ կիսամյակին սկսվեց նաև գրաբարի ուսուցումը և ոսկեդարյան հայերենի դյուրին բնագրերի ընթերցումը: Այդ դասընթացին կարող էր մասնակցել միայն լիսանսի բաժնի վերջին՝ չորրորդ լսարանի և բարձրագույն լիսանսի բաժնի ուսանողությունը, որի հետևանքով ավելի ցածր լսարանների մի խումբ ուսանողներ զրկվեցին հայերենի դասերին մասնակցելու իրավունքից: Դասերի այս սահմանափակ դրությունը վերացվեց շնորհիվ հայերենի դասատուի ձեռք առած միջոցների. 1968—1969 ուսումնական տարվա մեջ, նախկին 3 միավորի փոխարեն, հայերենի դասավանդությանը հատկացվեց 6 միավոր, որից՝ 3 միավորը լիսանսի բաժնում, արդի աշխարհաբար հայերենի ուսուցման համար, և 3 միավորը՝ բարձրագույն լիսանսի բաժնում, գրաբարի ու դասական բնագրերի ընթերցանության համար: Եվ որովհետև, ինչպես վերը ասվեց, յուրաքանչյուր միավորի դիմաց կարելի է ավել ժամեր պարապել, ուստի հայերենի դասերին հնարավոր է շատ ավելի ժամեր հատկացնել, եթե անհրաժեշտ թվով դասատուներ լինեն: Նոր դասատուներ վերցնելու հարցը բավական բարդ խնդիր է, ու թերևս ապագայում հնարավոր լինի օրինական ճանապարհով որևէ լուծում գտնել:

Թեհրանի պետական համալսարանում սկսված այս կարևոր գործի ներքին բովանդակության մասին լրիվ գաղափար կազմելու համար անհրաժեշտ է, որ այդ կապակցությամբ մի քանի բացատրություններ տրվեն: Նախ պիտի ասել, որ արդի և դասական հայերենների դասավանդությունը դրված է համեմատական լեզվաբանության և դասական լեզուների բաժնում՝ սանսկրիտերենի, գենդերենի, պահլավերենի, սեպաձև արձանագրությունների, հին պարսկերենի, սողդերենի, հին հունարենի և լատիներենի շարքում:

Հայերենի ուսուցումը պիտի աշխատի գիտական նպատակներ հետապնդել, պիտի ջանա պատրաստել ընթացավարտների այնպիսի սե-

րունդ, որը ի վիճակի լինի ուսումնասիրելու հայերեն և իրանական հին ու արդի լեզուների փոխադարձ կապերն ու ազդեցությունները: Հնարավոր պիտի դարձնի այնպիսի բարձր աստիճանի վրա դնելու հայերեն բնագրերի ընթերցումը, որ ուսանողներն ի վիճակի լինեն օգտվել հայ պատմագիրների՝ Իրանի հին կամ նոր դարերի պատմության ու մշակութային կյանքին նվիրված թանկագին տեղեկություններից:

Ուսումնասիրության համար կարևոր նյութեր են մատակարարում հայ ոսկեդարյան գրականության մեջ պահպանված ամենահնագույն տեղեկությունները իրանական հին կրոնի՝ զրադաշտականության, ինչպես նաև մանիքեական աղանդի մասին: Հինգերորդ դարի հայ մեծ իմաստասեր Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը» վստահաբար ամենահին աղբյուրն է ու միաժամանակ քննադատական խորիմաստ մեկնաբանությունը Զրադաշտի հիմնած կրակապաշտության կրոնի, որ հեղինակը կատարել է Արիստոտելի փիլիսոփայության ու տրամաբանության մեթոդով: Մոմսես խորենացու հավերժական արժեք ունեցող երկը ոչ միայն կարևոր աղբյուր է հայոց, այլ նաև Իրանի հնագույն շրջանի պատմության համար: Միջազգային արևելագիտության կողմից շատ բարձր գնահատանքի արժանացած գերմանացի ակադեմիկոս հայագետ Յոզեֆ Մարքվարտի հին Իրանի աշխարհագրության մասին գրած «Իրանահրա» երկը գրվել է հիմնականում «Աշխարհացույցի» հիման վրա: Իրանի տարթևական և սասանյան շրջանի պատմության և հոգևոր-մշակութային կյանքի ուսումնասիրությանը համար կարևոր սկզբնաղբյուրներ են Փավստոս Բուզանդի, Եղիշեի և ուրիշ հայ բազմաթիվ պատմագիրների երկերը՝ մինչև XVII դ. պատմիչ Առաքել Բայրիժեցին ու նրա գործը: Ֆերդոսու Շահնամի՝ իրանական այս մեծ դրոշմազնավեպի գրական-գիտական համեմատությունը Մոմսես խորենացու նաև այս բնագավառում թողած թանկագին տեղեկությունների ու նկարագրությունների հետ՝ շատ երախտաշատ գիտական նյութ է հատկապես պարսկախոս ուսանողների համար:

Համեմատական լեզվաբանությամբ հետաքրքրվող հայ ուսանողների համար շատ կարևոր գիտական ասպարեզ է հայ և իրանական լեզուների համեմատական ուսումնասիրության հարցը, որի հիմքը դրել է դերմանացի ակադեմիկոս հայագետ Հայրիխ Հյուբշմանը ու այն կատարելության է հասցրել Հրաչյա Աճառյանը իր Արմատական բառարանով: Սակայն չի կարելի պնդել, թե այս երկու մեծ լեզվաբանները սպառել են իրանական լեզուներից հա-

յերենին փոխանցված բոլոր բառերի համեմատական ուսումնասիրությունը, մանավանդ որ երկու լեզուների բարբառագիտությունը լրիվ պերպով չի ուսումնասիրվել: Գրական ֆաբուլիստի հայագիտական բաժնում պիտի քննության առնվիս և ուսանողության ուղադրությանը հանձնրվեն այս բոլոր հարցերը:

Գեհրտի համայնարանում հաստատված հայագիտական ճյուղը ամենահարմար վայրն է հայկական միջնակարգ դպրոցներն ավարտած հայ ուսանողների համար՝ խորացնելու նախապես ձևաբանական գիտելիքները հայերենի մեջ և դրանք ապագայում գործադրելու մանկավարժական ասպարեզում, մանավանդ եթե սեր ու ձգտում ունեն մասնակցելու հայ նոր սերնդի մայրենի լեզվի ուսուցման գործին:

Անցյալ ուսումնական տարվա վերջին համեմատական լեզվաբանության և իրանագիտության բարձրագույն լիսանսի մի շարք ուսանող-ուսանողուհիներ, քաջալերված դասատուի ցուցմունքներից, ցանկություն հայտնեցին իրենց ավարտական շարունակությունը գրել հայագիտական նյութերի շուրջ: Նրանցից ոմանք շնորհի էին հայերենի և արդի պարսկերենի հսկողների և խոնարհումների համեմատությունը, իսկ ոմանք ցանկանում էին դասական հայերենի ու պահլավերենի լեզվական կապերի ուսումնասիրությունը իբրև ավարտական նյութ ընտրել: Սակայն միայն երկու հոգու հաջողվեց հայերենի կապակցությամբ ավարտական քաղաքական ներկայացնել: Նրանցից առաջինը՝ աղայե Հոսեյնյուլի Նուրին ընտրեց հայերեն այբուբենի ծագումն ու գիտական վերլուծությունը ըստ Հրաչյա Աճառյանի: Նա այդ նյութը ցանկություն ունի պարսկերեն հրատարակելու: Երկրորդը՝ աղայե Ռամազան Ազադը, գրեց իրանական հատուկ անունների վերլուծությունը ըստ գերմանացի հայագետ Հայրիխ Հյուբշմանի «Հայկական քերականության»:

Հայերենի դասավանդության լուսաչին տարվա մեջ ունեցած այս հաջողությունները թույլ են տալիս հուսալու, որ ապագայում ավելի շատ աշխատանք կարելի է կատարել այս ասպարեզում:

* * *

Իսպահանի համալսարանի գրական ֆաբուլիստի հայագիտական բաժինը բացվել է 1960 թ., Իրանի արքայի՝ Մոհամմեդ Ռեզա շահ Բահլավի անմիջական թույլտվությամբ: Համալսարանի դրական ֆաբուլիստի տեսուչը (ղեկանը)՝ դոքտ. Ամիր Աբրահմ Ֆարուղին էր: Հայերեն հին և նոր լեզուների նշանակությունը իրանագիտության համար դոքտ. Ֆարուղին

կաղմել է տողերիս գրողի հետ միասնարար: Այդ զեկուցումը կրթական նախարարը ներկայացրել է Իրանի արքային:

Հայերենի դասընթացը տարվում է Իրանի դպրոցներում և համալսարաններում ուսուցվող պաշտոնականորեն ընդունված արդի շորս լեզուների ծրագրով (անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն), բայց ունի նրանց իրավական հանգամանքը: Հայերենի դասընթացը դրված է ճաշից հետո՝ դասավանդվող առարկաների շարքին: Ինչպես հիշված մյուս լեզուները, ունի շորս տարվա դասընթաց: Այդ շորս տարվա մեջ ուսանողները պիտի անցնեն 60 միավոր մասնագիտական առարկաներ (այս դեպքում՝ միայն հայերեն) և 40 միավոր՝ ոչ մասնագիտական, բայց պարտադիր առարկաներ: 60 միավորի մեջ է մտնում նաև հին պահլավերեն լեզուն, իսկ արդի պարսկերենը և մի օտար լեզուն դրված են երկրորդական և պարտադիր առարկաների մեջ. երկրորդական մյուս առարկաները ուսանողը կարող է ընտրել ինքը: Մի միավորը կարելի է պարապել 1 ժամ կամ ավելի:

Ուսանողները շորս տարվա իրենց ուսման դասընթացը վերջացնելուց հետո ստանում են լիսանսի (բաթալորի) աստիճան: Այդ լիսանսը ճանաչվում է պետության կողմից, բայց կրթական նախարարությունը մինչև այժմ ոչ մի ընթացավարտ ուսանողի (հայագիտական բաժնից) չի վարձել, հակառակ եղած դիմումների, առարկելով, որ հայերեն լեզուն Իրանի դպրոցների ծրագրի մեջ չկա և ավանդվում է միայն հայկական ազգային դպրոցներում (տարրական դպրոցներում՝ շաբաթական 12 ժամ, իսկ միջնակարգում՝ շաբաթական 6—7 ժամ):

Իսպահանի հայագիտական բաժնի բացման և ընթացիկ աշխատանքների մեջ մեծ ներառություն ունի դոքտ. Ա. Ֆարուզին, որ հյուրաբար եղել է նաև Երևանում: Նա երկու տարի առաջ փոխադրվեց Թեհրան և ներկայումս աշխատում է Թեհրանի պետական համալսարանում՝ որպես պատմական առարկաների դասախոս: Նրա Իսպահանից հեռանալով հայերենի թափներ մեծապես տուժեց, բայց չփակվեց, որով հետև այդ համալսարանի ընդհանուր տնօրեն (ռեկտոր) դոքտ. Մոթամիդին հայերենի ուսուցման հանդեպ բարյացակամ վերաբերմունք ունի: Յավալի է սակայն, որ այս ուսումնական տարվա մեջ հայերենի բաժնից փոխադրվեց դոքտ. Բալայանը. նա դասախոսում է ուղից համալսարանում միայն հոգեբանություն և մանկավարժություն: Նրա փոխարեն համալսարանի տեսչի կողմից հայերեն դասերի հրակիր նշանակված է պրն. Դավթյանը, որ նախկինում առողջապահական նախարարության

պաշտոնյա էր (համալսարանի տեսուչի նախկինում առողջապահական նախարարի օգնական էր և Դավթյանը նրա նախկին պաշտոնյաներից է): Թեհրան. Դավթյանը մասնագիտորեն հայագիտության ծանոթ չէ, բայց հայերեն բավականաչափ գիտե և ամեն ջանք գործ է դնում՝ իր վրա դրած պարտականությունները կատարելու: Ներկայիս նա աշխատում է ազգային դպրոցներից հանգստի կոչված մի քանի դասատուների Թեհրանից Իսպահան տանել:

Իսպահանի հայագիտական բաժնի գլխավոր մտահոգությունը էղել է մասնագետ դասախոսների կամ հայագետների պակասը: Փաստորեն հայերենի դասավանդումը կատարվել է արևայիսի անձնավորությանց կողմից, որոնց հալերենի գիտությունը չաղիվ կարող է բավարարել տարրական և կամ միջնակարգ դպրոցներում հայերեն լեզվի ուսուցմանը: Հայերենի ուսուցման մակարդակը կարող է բարձրանալ միայն այն դեպքում, երբ գործը հանձնվի մասնագետ դասատուների. նման անձանց թիվը Իրանում շատ սահմանափակ է, և եթե մի քանի հոգի կան, գործով կապված են Թեհրանի հայկական դպրոցներին և համաձայն չեն եղել Իսպահան փոխադրվելու: Ջանքեր են արվել արտասահմանից բերելու, բայց այդ փորձերը դրական հետևանք չեն ունեցել:

Իսպահանի համալսարանի հայագիտություն բաժնի ուսանողության գերակշռող մասը կազմում են Թեհրանի և կամ Իրանի այլ քաղաքների ազգային միջնակարգ դպրոցների հայ ընթացավարտները: Ներկա տարվա ուսանողության թիվը հասնում է 78 հոգու (բոլոր դասարաններում միասին):

Մինչև այժմ հայագիտական բաժնի ավել է երկու տասնյակ ընթացավարտներ, որոնցից ոմանք որպես հայոց լեզվի կամ չրականության դասատու աշխատում են Իրանի հայկական ազգային դպրոցներում և կամ ազգային տարբեր հաստատություններում, որպես ուսուցիչ: Նրանցից ոչ մեկը չի վարձվել արևայիսի կան նախարարության կողմից: Ընթացավարտներից օրիորդ Ռոզի Ալեքսանյանը Գյուլպենկյան հիմնարկության նյութական օժանդակությամբ ուսանել է Փարիզում, պրոֆ. Ֆելդիի մոտ: Կրկին Ն. Ջուղա վերադառնալով, նա դասավանդում է հայագիտական բաժնում՝ ողջիս հայոց գրականության և լեզվի դասախոս: Ներկայումս երեք ուրիշ ուսանողներ (մեկը միայն միջնակարգ դպրոցների ընթացավարտ, երկուսը՝ Իսպահանի համալսարանի հայագիտական բաժնի ընթացավարտ) ուսանում են Երևանի պրոֆ. Ֆելդիի մոտ: Մեր կարծիքով, սակայն, հայագիտության լրիվ դասընթաց նրանք կարող են ուսանել Երևանի համալսարանի իս-

չագիտական բաժնում: Փարիզը չի կարող այս
այն, ինչ նրանի համալսարանը:

Մի քանի տարի առաջ Իսպահանի համալ-
սարանի գրական ֆաբուլիստ Գ. Գյուլպենկյան
հաստատությունից 5 հազար դոլար ստացավ՝
հայագիտական գրադարան հիմնելու համար:
Ուսանողները կարող են օգտվել նաև Ն. Զու-
ղալի վանքի հայկական գրադարանից: Դրա-
նով հանդերձ գրական ֆաբուլիստ ուսանողու-
թյունը և դասատուները մեծապես կարիք ու-
նեն հորհրդային Հայաստանում նախկինում և
այժմ հրատարակվող, ինչպես նաև հետազա-
յին հրատարակվելիք հայագիտական, գրական,
պատմական հրատարակությունների: Ուսանո-
ղությունը միայն այդ նոր ուսումնասիրություն-

ների ընթերցանությամբ կարող է լրացնել իր
գիտական թերիները:

Հատկապես անհրաժեշտ են մեծ հայագետ-
ներ Մ. Արեղյանի, Հ. Աճառյանի, Գ. Ղափանց-
յանի, Ս. Մալխոսյանի, ինչպես նաև է. Աղա-
յանի, Գ. Զահուկյանի, Ա. Ղանալանյանի և այլ
նշանավոր բանասերների և հայագետների ու-
սումնասիրությունները՝ ոչ միայն Իսպահանի,
այլ նաև Թեհրանի պետական համալսարանի
հայագիտական բաժնի համար: Անշուշտ կարևոր
է լեզվաբանական, պատմագիտական և այլ
հանդեսների և ամսագրերի կանոնավոր առա-
քումը: Շատ անհրաժեշտ է նաև օրաթերթերի
ու շաբաթաթերթերի առաքումը:

Պրոֆ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՆՆԱԶԱՐՅԱՆ (Թեհրան)

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

DOCUMENTI DI ARCHITETTURA ARMENA. I. Hakhpat. Testo:
Stephan Mnazaganian ed Adriano Alpago-Novello. Documentazione foto-
grafica: Adriano Alpago-Novello ed Armen Manoukian. Tradizioni: dall'
armeno—Armen Zarian; in inglese—Claudia Accinni e Daniela Fano.
Milano, Edizioni Ares, 1968, 47 p., ill.

«Հայկական ճարտարապետական հուշար-
ձաններ» մատենաշարի այս անդրանիկ գիրքը՝
«Հաղբատը», չքեղ տպագրությամբ լույս է տե-
սել Միլանում՝ Հայկական ՍՍՀ գիտությունների
ակադեմիայի արվեստի ինստիտուտի և Միլանի
պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապե-
տական ֆակուլտետի համագործակցությամբ և
Հակոբ ու Արմեն Մանուկյանների խմբագրու-
թյամբ:

Գիրքը լույս է ընծայվել իտալերեն և անգ-
լերեն ղուգահեռ տեքստով: Ըարժարապետու-
թյան դոկտոր Ստեփան Մնացականյանը գրել
է «Հաղբատի (X—XIII դդ.) վանքի կոմպլեք-
սը» պատմական ակնարկը, իսկ իտալացի ճար-
տարապետ Ադրիանո Ալպագո-Նովելլոն՝ «Հաղ-

բատի ճարտարապետությունը» (էջ 6—9) նկա-
րագրական-վերլուծական հոդվածը:

Գրքում ղեկավար են հիսունից ավելի գու-
նավոր ու միագույն լուսանկարներ և քսանից
ավելի շափագրություններ ու հատակագծումներ:
Վանքը պատկերող լուսանկարները կատարել
են ճարտարապետներ Արմեն Մանուկյանը և
Ադրիանո Ալպագո-Նովելլոն, որոնք 1967 թ.
չրջագայել են Սովետական Հայաստանում:

Հայկական ճարտարապետական հուշարձան-
ներից մեկին՝ Հաղբատին նվիրված այս ուսում-
նասիրությունը կնպաստի հայ միջնադարյան
ճարտարապետությունը օտար լեզուներով ըն-
թերցողներին ծանոթացնելու և հայ մշակույթի
տարածման գործին:

REVUE DES ETUDES ARMÉNIENNES. Nouvelle série. Tome V.
Publié par le concours de la Fondation Calouste Gulbenkian. Paris, Lib-
rairie C. Klincksieck, 1968. 504 pp.

Արտասահմանում լույս տեսնող օտար լեզվով
հայագիտական ամենաարժեքավոր պարբերական
հրատարակության հերթական հինգերորդ հա-
տորը հարուստ է իր բովանդակությամբ: Այս
համարը պարունակում է բառասուրճի ավելի

ուսումնասիրություններ, հոդվածներ, գրախոսա-
կաններ և հաղորդումներ:

Բանասիրական ուսումնասիրություններից հի-
շատակության արժանի են՝ է. Բենվենիստի «Հու-
նարեն բարդ բառերի հայերեն թարգմանությու-